Պարույր Սևակ

Կաքավը

1

Մի ժամանակ,
Հի՛ն ժամանակ,
Ինչքա՜ն առաջ՝ի՞նչ իմանաք
Երգ չսիրող ու խռպածայն հավք ու թռչուն
Չար նախանձից Արծրվի մոտ գանգատվեցին.
«Կաքավները մեզ չեն տալիս հանգիստ ու քուն.
Արթնանում են առավոտվա ժամը վեցին,
Ամբողջ օրը հա՜ երգում են, գլո՛ւխ տանում,
Անպետքները չե՛ն հասկանում,
Որ իրենց պես
Մենք անբա՛ն չենք, գո՜րծ ենք անում»:
Երգ չէր սիրում Արծիվն ինքը
(Ինքն էր, իր որսն ու երկինքը):
Եվ նա խոժոռ շուրջը նայեց,
Տեղնուտեղը հրամայեց,
Որ այլևս չերգեն նրանք.
«Գլուխներդս ճի՛շտ որ տարաք»:

2

Ու լուռ մնաց ամեն կաքավ:
Սար ու ձորից է՛լ ձայն չեկավ:

Այսպես անցան ամի՛ս, տարի՛...
Եվ ամպ նստեց սար ու քարի:
Ամպ չէր սիրում Արծիվն ինքը.
(Եթե պարզ չէ իր երկինքը,
Ինքը ինչպե՞ս էլ որս անի,
Ո՞նց զոհերին զանազանի):
Եվ նա դեմքին կրկին հագավ
Երգ սիրողի դիմակ սիրուն
Ու թույլ տվեց՝ ամեն կաքավ
Նորի՛ց երգի քար ու սարում:
3
Ամեն կաքավ ուզեց երգել
Առաջվա պես, հնի նման.
(Չէ՞ որ արդեն չկար արգելք
Եվ կար արդեն այլ հրաման):
Թվաց՝ պիտի նորի՛ց տեղան,
Նորի՛ց լողան
Ու գեղգեղան
Նրանց նախկին երգերը ջինջ,
Բայց ստացվեց լոկ «կա՛ղ-կըղա՛»,
Լոկ «կա՛ղ-կըղա՛», ուրիշ ոչինչ...